

տին ամբողջ սիրովը:»

«Տուեալ ի Հոռմ, առ Դրանն Ս. Մարիամ Աւագ Եկեղեցւոյն, ընդ մատանեաւ ձկնորսի ի 6 աւուր Օգոստոսի յամի 1667, յառաջին ամի Քահանայապետութեան մերոյս:»⁽²⁾

Անմեկնելի է թէ ինչպէս դեռ կան գրողներ որոնք նկատի ունենալով հանդերձ Պապին այս նամակը կը յանդգնին Յակոբ Զուղայեցին Հոռմէադաւանութեան հաւատարիտի եղած նկատել: Հոռմէադաւան ըլլալու գլխաւոր պայմաններէն է նաեւ զինքին մէջ ջուր խառնել պատարադի ատեն: Ասիկա Յակոբ Զուղայեցին ոչ միայն չէ ընդունած այլ նաեւ ամէն միջոց դործածած է փրկելու համար Լեհահայ եկեղեցին այդ դաւանափոխական արարքէն, որուն Լեհահայերը իրենք ալ ողի ի բռն կը ընդմանային: Պապը իր նամակին սկիզբը Յակոբ Զուղայեցին նամակին կու տայ մեկնութիւն մը որ հոն գոյութիւն չունի: Աւելորդ կը սեպեմ հոս երկարել Պապին այս նամակին մասին որ լաւ վկայական մը չէ Կղեմէս Թ.ի «Քահանայապետական սրտին ամբողջ սիրոյն»:

Որպէս զի տարակոյս չմնայ Յակոբ Զուղայեցիի Հոռմէադաւանութիւն ընդունած չըլլալուն մասին, հոս կ'արտագրեմ նաեւ Հաւատոյ Տարածման Ժողովին նամակը որուն արտագրման մասին կը յիշէ վերը տրուած Պապական նամակը: Ժողովին վարիչը Կարգինալ Անտոն Պարպերինի կը գրէ Յակոբ Զուղայեցիի յարգանքի եւ վայելչութեան տարրական տուեալներէ դուրի նամակ մը, ցոյց տալով եկեղեցւոյ մը վեհապետին հանդէպ աններելի ամբարտաւանութիւն, լոկ հասցէագրելով

«Մեծ Հայքի Պատրիարքին»

27 Օգոստոս 1667»

«Միջագետքի Տէր Արքեպիսկոպոսը Տէրութեանդ նամակին հետ Հոռմ ժամանեց այն ժամանակ երբ ամէնուն արցունքներուն ու վշտին հետ, Հոգին Աստուծոյ ձեռքն աւանդեց սուրբ եւ յարգելի յիշատակաց արժանի Աղէքսանդր Է., եւ երբ կարդէինք Սրբազան Ժողովը կը խորհէր յաջորդ Քահանայա-

պետին ընտրութեան մասին: Թէպէտ խիստ ծանր արգելք մ'էր այս՝ սակայն Սրբազան Ժողովին Քարտուղարը հարցուց՝ թէ նոյն Եպիսկոպոսը կ'ուզէ՞ր քու⁽³⁾ միտքը եւ նամակը յայտնել Վրսեմաշուք Հայրերուն, որպէսզի երկարատեւ սպասում չունենար անոր անհամբեր հոգին: Բայց որովհետեւ ան պատասխանեց՝ թէ երդումով պարտաւորուած է ոչ մէկուն յայտնել քու յանձնարարութիւնդ եթէ ոչ Գերագոյն Քահանայապետին, հոգ տարուեցաւ որ ընտրութենէն յետոյ ներկայացուէր մեր Սրբազան Տիրոջ, Կղեմէս, Թ.ի, եւ անոր առջեւ պարզէր պատուէրներդ եւ նամակը: Անոնցմով Նորին Սրբութիւնը ճանցաւ Տէրութեանդ գանգատը Լեւոպոլսոյ Արքեպիսկոպոսին մասին՝ թէ սա կը դայթակղեցնէ Հայ Ազգը, որ Լեհաստան կը բնակի, մասնաւորապէս այն պատճառաւ՝ թէ Ս. Պատարադի ընթացքին ջրբախառն զինի կը սրբագործէ: Անոր պատասխանուեցաւ՝ թէ այս մասին Արքեպիսկոպոսը չի սխալիր, վասնզի անով, հաստատ հաւատքով կը քարոզէ եւ կը պահէ Տիեզերական Եկեղեցւոյ հնամենի սովորութիւնը, որ առաքեալներէն կու դայ եւ միահամուռ ընդունուած է արեւելեան եւ արեւմտեան Եկեղեցւոյն կողմէ, եւ վճռուած է բազմաթիւ տիեզերական Ժողովներէ եւ հայոց աւանդուած է Փլորենտիոյ Ժողովին ատեն խնդրուած վճռադրի մը մէջ, ինչպէս աւելի երկարօրէն պիտի տեսնես նամակին մէջ, զոր Նորին Սրբութիւնը քեզի կը յղէ: Այս պատճառաւ Տէրութիւնդ քող հետեւի միւս հաւատացեալներուն եւ այս Ս. Աթոռին հաւատքին եւ վարդապետութեան, եւ իր միտքը դարձրին միութեան եւ անկեղծ համաձայնութեան, որպէսզի առանց հոգիներու վնասին, այլ գերագոյն ուրախութեամբը ջրիստոնեայ աշխարհին, դարձեալ Հայ Ազգն ընդունուի Տիրոջ Ժառանգութեան մէջ, եւ Սրբազան Ժողովը եւ Վսեմաշուք Հայրերը՝ Քեզ եւ Եպիսկոպոսներդ ա'յնքան սիրով պարտւեմ ո'րքան միւս ուղղափառները իրենց բարեգործութեամբ կը պահպանեն եւ կը հոգան: Եթէ այս բանս չընծայուեցաւ Տէր Եպիսկոպոսին, զայն վերագրելու էք ոչ

(2) Աճղ, էջ 153-155: